«Ես եմ ճանապարհը, եւ ճշմարտությունը եւ կեանքը»

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Հիսուս Քրիստոսն է «ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը» (Հովհաննէս 14.6)

Կարդացեք Հովհաննես 14.1-6-ը՝ ուշադրություն դարձնելով, թե Փրկիչն ինչպես է խոստացել օգնել նրանց, ովքեր հետևում են Իրեն:

- Ի՞նչ ճշմարտություններ է Տերն ուսուցանում այս հատվածներում:
- Փրկիչն ինչպե՞ս է Իրեն անվանել հատված 6-ում:
- Այս տիտղոսներից յուրաքանչյուրը ձեզ ի՞նչ է ուսուցանում Հիսուս Քրիստոսի և Նրա հետ ձեր հարաբերությունների մասին:

Եթե նախորդ դասի ժամանակ կազմել եք Հիսուս Քրիստոսի տիտղոսների և դերերի ցուցակը, կարող եք ավելացնել այն, ինչ հայտնաբերել եք Հովհաննես 14 գլխում: Մորմոնի Գիրքը կարող է օգնել ձեզ ավելի լավ հասկանալ, թե ինչ եք ուսումնասիրում Նոր Կտակարանում: Կարդացեք Մոսիա 3.17-ը և մտածեք, թե այն ինչպես է օգնում մեզ ավելի լավ հասկանալ Հովհաննես 14.6-ը: Այն ժամանակ Առաջին Նախագահությունից նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը ուսուցանել է.

Աստված ուզում է, որ դուք գտնեք ձեր ճանապարհը Իր մոտ վերադառնալու համար, և այդ ճանապարհը Փրկիչն է [տես Հովհաննես 14.6]: Աստված ուզում է, որ դուք սովորեք Իր Որդուց՝ Հիսուս Քրիստոսից, և վայելեք մեծ խաղաղություն ու երջանկություն, որոնք առաջ են գալիս աստվածային աշակերտության ուղուն հետևելու արդյունքում (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Ստանալ վկայություն լույսի և ճշմարտության մասին»,*Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2014, 21):

- Ե՞րբ եք դուք կամ ձեր ծանոթը վայելել մեծ խաղաղություն և երջանկություն, որոնք առաջ են գալիս Հիսուս Քրիստոսին հետևելու արդյունքում:

Փրկչին գտած և Նրան հետևելու համար օրհնված մարդու օրինակը տեսնելու համար կարող եք դիտել «Հիսուս Քրիստոսն է ճանապարհը» (5:02) ChurchofJesusChrist.org կայքում:

- Մենք ի՞նչ ճանապարհներով կարող ենք հետևել Փրկչին՝ Երկնային Հոր մոտ վերադառնալու համար:
- Ինչպե՞ս կարող ենք իմանալ՝ արդյո՞ք ճիշտ ուղու վրա ենք:

Հիսուս Քրիստոսը «որթն է» (Հովհաննես 15.5)

Հիսուս Քրիստոսը օգտագործում էր մի համեմատություն, որպեսզի Իր աշակերտներին ուսուցաներ Իր հետ նրանց հարաբերությունների մասին: Կարդացեք Հովհաննես 15.1-11-ը՝ փնտրելով այս համեմատությունը: Եթե նախորդ դասի ժամանակ դուք Հիսուս Քրիստոսի տիտղոսների և դերերի ցուցակ եք կազմել, կարող եք ավելացնել այն, ինչ հայտնաբերել եք Հովհաննես 15 գլխում:

- Ձեր կարծիքով, Հիսուս Քրիստոսն ի՞նչ է ուսուցանում այս համեմատության միջոցով:
- Այս համեմատությունից ի՞նչ ճշմարտություններ կարող եք սովորել Հիսուս Քրիստոսի հետ մեր հարաբերությունների մասին:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը բացատրել է, որ Փրկչի հրավերը՝ «կացէք ինձանում՝ եւ ես ձեզանում» «*հավերժ* Իր մեջ մնալու հրավեր է» (“Abide in Me,” Ensign or Liahona, May 2004, 32): Երեց Հոլլանդը բացատրել է, թե մեզ համար ինչու է այդքան կարևոր ընդունել Փրկչի՝ Իր մեջ «կենալու» հրավերը: Գուցե կամենաք դիտել «Կացեք ինձանում» տեսանյութը 13:26-14:23-ը կամ կարդալ հետևյալ ելույթը:

Հիսուսն ասել է. «Առանց ինձ չէք կարող ոչինչ անել» [Հովհաննես 15.5]: Ես վկայում եմ, որ դա է Աստծո ճշմարտությունը: Քրիստոսն ամեն

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *“I Am the Way, the Truth, and the Life”*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.

ինչ է մեզ համար, և մենք պետք է «մնանք» Նրանում ընդմիշտ, համառորեն, անսասան, հավերժ: Որպեսզի ավետարանի պտուղը ծաղկի և օրհնի մեր կյանքերը, մենք պետք է ամուր կառչած մնանք Նրան՝ մեր բոլորի Փրկչին և Նրա այս Եկեղեցուն, որը կրում է Նրա սուրբ անունը: Նա է որթը, որը մեր ուժի ճշմարիտ աղբյուրն է և միակ աղբյուրը հավերժական կյանքի: Նրանում մենք ոչ միայն կդիմանանք, այլ նաև կգերիշխենք ու կհաղթենք այս սուրբ գործում, որը երբեք մեզ ձախողում չի բերի» (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Կացեք ինձանում», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2004, 32)

Մորմոնի Գիրքը կարող է օգնել ձեզ ավելի լավ հասկանալ այն, ինչ ուսումնասիրում եք Նոր Կտակարանում: Կարդացեք Ալմա 26.12-ը և մտածեք, թե այն ինչպես է առնչվում Հովհաննես 15.1-11-ի հետ:

- **Որո՞նք են այն պտուղները (արդյունքները կամ օրհնությունները), որոնք դուք տեսել եք ձեր կյանքում, երբ փորձել եք «կենալ» Հիսուս Քրիստոսում:**
- **Ի՞նչ գործողություններ կարող են օգնել ձեզ «կենալ» Հիսուս Քրիստոսում:**

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *"I Am the Way, the Truth, and the Life"*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.